«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	*Ուսուցման գործընթացում Համագործակցության անհրաժեշտությունը, Համագործակցային ուսուցման մեթոդները " Holidays and customs " թեմայի դասավանդման գործընթացում*
ԱՌԱՐԿԱ	*Անգլերեն*
ՀԵՂԻՆԱԿ	*Հերմինե Փանոյան*
ՄԱՐԶ	*Շիրակ*
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	*«ԱՐԹԻԿԻ ԹԻՎ 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ*

Բովանդակություն

1.Ներածություն …….3

2. Դասի պլան ……5

3.Դասի ընթացք …… 7

4.Գնահատում…….....19

5. Եզրակացություն……..20

6. Օգտագործված նյութերի աղբյուրները……21

Ներածություն

Ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում ընթանում են կրթական համակարգի շարունակական վերափոխումներ: Վերափոխումները միտված են ապահովելու և սպասարկելու հասարակական կայուն և դրական փոփոխությունները:

Ավանդական դպրոցը հաջողությամբ է լուծել գիտելիքների խնդիրը, սակայն գիտելիքները ընդլայնելու և խորացնելու հնարավորություն է ընձեռում միմյանց հետ սովորելը, համագործակցելը: Խիստ կարևոր է տարբերելը համագործակցային ուսուցումը ավանդական խմբային աշխատանքից: <<Ուսուցումը համագործակցային կլինի այնդեպքում, երբ աշակերտները միասին՝ զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդրի լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք իրականացնելու համար>> [2.1]

Համագործակցային ուսուցման կիրառումը բարենպաստ միջավայր ստեղծելու միջոցներից մեկն է ուսուման գործընթացում մտածողության զարգացման համար: Համագործակցային ուսուցման կիրառման պատմությունը գալիս է դեռևս անտիկ ժամանակից: Հին հռոմեացի փիլիսոփա Սենեկան պնդում էր, որ սովորեցնողը սովորում է կրկնակի:

17-րդ դարում Կոմենսկին հավատում էր, որ սովորողները շահում են ուրիշներից կամ սովորեցնում են ուրիշի:

Հետագայում՝ 1989 թ-ին Ջենսոնը և Ջոնսոնը կատարեցին 193 հետազոտություն, որոնցում համագործակցային ուսուցումը համեմատվում էր դասավանդման ավանդական ձևերի հետ: Հետազոտությունները ցույց տվեցին, որ համագործակցային ուսումնառության մոտեցումները դասավանդման ավանդական ձևերից ավելի արդյունավետ էին. ուսումնառություն ապահովելու տեսակետից համագործակցությունը շատ ավելի զորեղ միջոց է, քան շփման այլ տարբերակները:

Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում ամենևին չի նշանակում հրաժարվել ավանդական մոտեցումներից:Այն պարզապես աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող ևս մեկ միջոցի ներդրում է: Համագործակցային

ուսուցումը հնարավորություն է տալիս ուսուցչին դասապրոցեսը դարձնելու ավելի բազմազան ու հետաքրքիր:

Զուտ մանկավարժական տեսանկյունից բացի համագործակցային ուսուցումն ունի նաև հասարակական գործառույթ: Եթե հաշվի առնենք, որ այսօր մեր հասարակության անդամները իրենց մտածելակերպով ու արժեքներով բազմազան են խորհրդային ժամանակների միատեսակության համեմատ, ապա հասկանալի է դառնում, որ համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքը արդյունավետ դարձնելու համար: Համագործակցային ուսուցումը անհրաժեշտություն է համարում նաև Նոբելյան մրցանակի դափնեկիր Ջեյմս Ուաթսոնը՝ «Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Դրանք են՝

- *աշակերտների թիմային առաջադիմություն,*
- *խճանկար,*
- *շրջագայություն պատկերասրահում,*
- *երեք բանալի և մեկ կողպեք,*
- *հինգրոպեանոց ազատ շարադրանք:*

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ

Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստվածությունն է:Ուսուցիչը պետք է պլանավորի, ուղղորդի, ստեղծի համագործակցելու համար նպաստավոր միջավայր, աջակցի և մտածելու հնարավորություն ընձեռի ուսուցման կազմակերպման բարդ գործընթացում:Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակային մոտեցում, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը, նախապատրաստի թեմային վերաբերող դիտակտիկ նյութեր և պարագաներ: Մինչ աշակերտները նախապատրաստվում են, ուսուցիչը պարբերաբար մոտենում է նրանց , հետևում խմբային համագործակցության ընթացքին, պատասխանում աշակերտներին հուզող հարցերին այն դեպքում, երբ այն առաջացել է խմբի բոլոր անդամների մոտ, խրախուսում ու գովաբանում աշակերտների առաջընթացը:

Դասի պլան

V III դասարան

Դասի թեման

Holidays and Customs : ***Easter in France/ Easter in Great Britain /***

Easter in the Republic of Armenia

Դասի տիպ	
	Համագործակցային դաս
Դասի նպատակը	
Կրթական	Սովորողը պետք է իմանա Զատկի Տոնի նշանակությունը: Կարողանա բառապաշարը ճիշտ կիրառել խոսքում: Գաղափար կազմի տոնի վերաբերյալ, իմանա ինչպես են տոնում <<Սուրբ Զատիկը>> Հայաստանում, Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում:
Դաստիարակչական	Նպաստել աշակերտների մոտ տոների ու ավանդույթների վերաբերյալ գիտակցության ձևավորմանն ու զարգացմանը:
Սոցիալական	Կարողանա զարգացնել համագործակցելու հմտությունը, կատարի եզրահանգումներ: Ձեռք բերի խմբում աշխատելու և գործը ավարտին հասցնելու կարողություններ: Կարողանա գնահատել ընկերոջը և իր աշխատանքը:
Անհրաժեշտ պարագաներ, ցուցադրական նյութեր	Լուսանկարներ, համակարգիչ, ցուցապաստառներ, նկարներ, ուսուցողական նյութեր, թուղթ, մարկեր:
Հիմնական հասկացություններ	<<Սուրբ Զատիկը>> Հայաստանում, <<Սուրբ Զատիկը>> Ֆրանսիայում, <<Սուրբ Զատիկը>> Մեծ Բրիտանիայում, Զատկի խորհուրդն

	ու խորհրդանշանները, նմանություններն ու տարբերությունները:

Դասի փուլերը	Ժամա քանակ	Ուսուցչի գործողությունը	Աշակերտի գերծողությունները	Կիրառվող մեթոդներ
Ներածական մաս՝ Խթանման փուլ	7 ր	Բացատրել, բաժանել խմբերի, կապել հիմնախնդիրները առօրյա կյանքի հետ: Տալ մեկնաբառ <<պրիզմա>> կառուցելու համար	Ընտրել ավագ, լսել ուսուցչի հրահանգները, Կառուցել <<Պրիզմա>> ըստ մեկնաբառի	<<Պրիզմա>>
Հիմնական մաս՝ Իմաստի ընկալում	20 ր	Տալ բաշխիչ նյութ, հանձնարարել աշխատել, վերահսկել, ժամանակ առ ժամանակ մոտենալ խմբերին, հետևել աշխատանքի ընթացքին, արձագանքել աշակերտներին հուզող հարցերին: Հանձնարարել քերականական և բառային աշխատանքները:	Ընթերցել, վերլուծել հիմնախնդիրը, ցուցաբերել ստեղծագործ մոտեցում: Աշխատել խմբերով, կատարել քերականական և բառային աշխատանքները, օգնել խմբի անդամներին, ստեղծել պաստառներ:	Համագործակցություն խմբի անդամների հետ
Ամփոփում	10 ր	Լսել աշակերտներին, կապակցել, խրախուսել, խթանել, ուղղորդել, եզրահանգումներ անել: Գնահատել	Ներկայացնել խմբային աշխատանքները, խոսել Զատկի տոնի ու խորհրդանշանների մասին, բացատրել քերականական և բառային աշխատանքները	M- աձև աղյուսակ "EASTER WORD HUNT" papers

Գնահատում	3 ր	Տալ միավորներ յուրաքանչյուր առաջադրանքից հետո	Գնահատել իրենց և մյուս խմբերին	Գնահատման սանդղակ, Education Board
Անդրադարձ	5 ր	Ինչ արեցինք Ինչ սովորեցինք Ինչ գիտեինք	Կատարել համեմատություն <<Վեննի դիագրամով>>:	<< Վեննի >> դիագրամա

Դասի ընթացքը

<u>Առաջին փուլ՝ խթանում:</u>

Այս փուլում 9 հոգանոց դասարանում աշակերտներին բաժանում ենք 3 խմբի: (Աշակերտները զամբյուղի միջից ընտրում են մեկական ձու: Ընտրելուց հետո այն աշակերտները, ովքեր ընտրել են կանաչ գույնի ձու, խմբավորվում և կազմում են առաջին խումբը: Երկրորդ խումբ են կազմում կարմիր գույնի ձու ընտրողները, իսկ երրորդ՝ կապույտ ձու ընտրող աշակերտները): Համապատասխանաբար տրվում են խմբերի անունները՝ France, Great Britain, Armenia. Ընտրվում են ավագներ:




Այս փուլում կիրառում ենք <<Պրիզմա>> մեթոդը: Խմբերին բաժանում ենք պաստառներ, որոնց վրա գրված է <<Պրիզմա>>-յի մեկնաբառը՝ Easter. Շարունակում ենք ասոցիատիվ մտածողության վրա հիմնվող ընթացքը: Պրիզման եզրափակում ենք վերջնաբառով: Պրիզմայի ամփոփիչ քայլում աշակերտները

գտնում են տրամաբանական կապ մեկնաբառի ու վերջնաբառի միջև, որն էլ իր արտացոլումն է գտնում մեկ նախադասության մեջ:

Պրիզմա



Easter is a Christian holiday. (group 1)
Easter is considered as the most important Christian celebration of the year. (group 2)
Easter is the festival that occurs on the first Sunday after the first full moon in spring. (group 3)

Ավարտից հետո խմբերից մեկական աշակերտ բացատրում է Պրիզման:
Բոլոր խմբերին տրվում է մեկ միավոր:

Երկրորդ փուլ՝ իմաստավորում

Այս փուլի ընթացքի համար Խմբերին տրվում են բաշխիչ նյութեր, լուսանկարներ, ուսուցողական նյութեր:

Task 1

“France” խմբին տրվում է ուսուցողական նյութ, որը վերնագրված է “Easter in France”.

“Armenia” խմբին տրվում է ուսուցողական նյութ, որը վերնագրված է “Easter in Armenia”.

“Great Britain ” խմբին տրվում է ուսուցողական նյութ, որը վերնագրված է “Easter in Great Britain”.

Այս առաջադրանքի նպատակն է ստուգել աշակերտների մոտ ընթերցելու, կարդացածի իմաստը հասկանալու և այն իրենց բառերով արտահայտելու կարողությունը:

Task 2

Երկրորդ առաջադրանքը բառային աշխատանք է, որի նպատակն է ստուգել աշակերտների բառարանային գիտելիքները: Խմբերին բաժանվում են “Easter word hunt” թերթիկներ:

“France” խումբը պետք է խառնված բառերի միջից գտներ և ընդգծեր առաջին սյունակում տրված բառերը:

“Armenia” խումբը պետք է խառնված բառերի միջից գտներ և ընդգծեր երկրորդ սյունակում տրված բառերը:

“Great Britain ” խումբը պետք է խառնված բառերի միջից գտնի և ընդգծի երրորդ սյունակում տրված բառերը:

Task 3

Երրորդ առաջադրանքը քերականական աշխատանք է, որի նպատակն է ստուգել աշակերտների քերականական գիտելիքները:

“France” խումբը պետք է իր ընթեցանության նյութի միջից դուրս հանի ներկա անորոշ ժամանակաձևով դրված բայերը (Simple Present) և տեղադրի M-աձև աղյուսակում:

“Armenia” խումբը պետք է իր ընթեցանության նյութի միջից դուրս հանի անցյալ անորոշ ժամանակաձևով դրված բայերը (Simple Past) և տեղադրի M-աձև աղյուսակի համապատասխան վայրում:

“Great Britain ” խումբը պետք է իր ընթեցանության նյութի միջից դուրս հանի բոլոր անցյալ ժամանակաձևով դրված բայերը (Past verbs) և տեղադրի M-աձև աղյուսակի համապատասխան վայրում:





Ընթացքը

Դերերի բաշխում. խմբում յուրաքանչյուր անդամ ունի իր դերը՝

I. **ընթերցող**-կարդում է հանձնարարված նյութը՝ որքան հնարավոր է պարզ ու հասկանալի

II. **ժամանակին հետևող**- հետևում է ժամանակին, պարբերաբար հիշեցնում ժամանակի մասին: Ժամանակը լրանալուց 4-5 րոպե առաջ կատարում նախազգուշացում, 3-4 րոպե թողնելով կատարած աշխատանքների ամփոփմանը:

III. **Գրառումներ կատարող**- նյութի ընթերցման ընթացքում կատարում են գրառումներ, գրանցում խմբի աշխատանքը:

Համագործակցային Խմբերը , ստանալով համապատասխան ուսուցողական նյութերը, սկսում են աշխատել: Ընթերցում են նյութը, կատարում , համապատասխան

գրառումներ, քննարկում նյութը, փոխանակում կարծիքներ, հետևում են ժամանակին, գծվում են սխեմաներ: Ժամանակը լրանալուց հետո ամփոփում են կատարած աշխատանքը և ներկայացնում ուսուցչին:

Երրորդ փուլ՝ կշռադատում

Այս փուլում Խմբի անդամները ներկայացնում են իրենց աշխատանքները:

Առաջին խումբ -Ներկայացնում է Զատկի տոնի խորհուրդը Ֆրանսիայում:/ Ինչպես են տոնում Սուրբ Զատիկը Ֆրանսիայում, որոնք են Զատկի խորհրդանշանները (spring flowers, lambs, birds' eggs, Osterlammele, hot cross buns) /.

Երկրորդ խումբ - Ներկայացնում է Զատկի տոնի խորհուրդը Հայաստանում:

/Ինչպես են տոնում Սուրբ Զատիկը Հայաստանում, որոնք են Զատկի խորհրդանշանները, որոնք բնորոշ են Հայաստանին (red eggs, red wine, plav with raisins, fish , pascha) /.

Երրորդ խումբ – Ներկայացնում է Զատկի տոնի խորհուրդը Մեծ Բրիտանիայում:

/Ինչպես են տոնում Սուրբ Զատիկը Մեծ Բրիտանիայում, որոնք են Զատկի խորհրդանշանները, որոնք բնորոշ են այդ երկրին (the cross, the egg, the rabbit, The Easter egg-tree, the lamb, hot cross buns)/.






Խմբերն իրենց առաջադրանքը ներկայացնելուց հետո պաստառի վրա ցույց են տալիս խորհրդանշանները, նրանց նկարները:

Դրանից հետո խմբերը բացատրում և ներկայացնում են բառային ու քերականական առաջադրանքները, որից հետո ստանում են իրենց միավորները:





Առաջին խմբին ներկայացվող ուսուցողական նյութ

Easter Day in France

Easter Sunday in France is a time for many Christians to celebrate Jesus Christ's resurrection. People may attend special church services, eat a festive meal and search for Easter eggs.

What Do People Do?

Many Christians may attend special church services to celebrate Jesus' resurrection on Easter Sunday. ***Church bells*** are not rung on the Friday and Saturday before Easter Sunday as a general rule. This is a sign of mourning. However, church bells are rung for a long time and in a celebratory manner curing the church services on Easter Sunday. These are known as the Easter bells.

Many people spend Easter Sunday with family members or friends and eat a festive meal. ***Roast lamb with spring beans or other freshly harvested vegetables or leaves, brightly colored boiled eggs and omelets*** are popular. ***Easter eggs made of chocolate or candy are popular gifts and children are told that Easter hares, rabbits or bells bring the gifts.***

Public Life

Public life is generally very quiet on Easter Sunday, as on other Sundays, in France. Post offices, banks, stores and other businesses are closed. Outside of tourist areas, restaurants and cafes may be closed. However, some stores in Paris, as well as at airports, railway stations and along major highways, may be open.

Public transport service schedules vary depending on where one lives and intends to travel. Museums that are normally open on Sunday may be open or closed. Churches may be closed

for visitors who do not wish to take part in the services and guided tours may not be available.

Background

Easter Sunday celebrates Jesus Christ's resurrection after his crucifixion, according to Christian belief. Jesus' crucifixion is commemorated on Good Friday. These were important events in early Christian history and symbolize central ideas in Christianity. The day after Easter Sunday is Easter Monday and it is a public holiday in France.

Symbols

Spring flowers, lambs, birds' eggs and Easter eggs are symbols of Easter Sunday in France. They are symbolic of nature's rebirth or resurrection after the dark and cold winter period.

Special biscuits known as *Osterlammele* are eaten in the Alsace region. They are baked in a clay mould and are in the shape of a lamb sitting on the ground. The *Osterlammele* were traditionally given to children after the church service on Easter Monday. Bakers now sell them and these are often decorated with ribbons and paper banners.

Երկրորդ խմբին ներկայացվող ուսուցողական նյութ

Easter Day in Armenia

Easter (Zatik) is the favourite and the most anticipated holiday in the Christian world. Everybody greets each other on this day with “Christ has arisen”-“Blessed is the resurrection of Christ”. During the Lenten fasting season of 40 days before Easter, Armenian families put lentils or other sprouting grains on a tray covered with a thin layer of cotton, and keep it in a light place of the house until Easter when sprouts appear. These green sprouts, symbolizing spring and awakening of nature, are the “grass” on which people place colored eggs to decorate the Easter table.

To the present day, Armenians have preserved the beautiful biblical lore which refers to red eggs and cheorek (sweet bread): “When Christ was crucified, his mother took some eggs and bread wrapped in the shawl. When the Mother saw her Son crucified and his arms bleeding, she knelt down and cried. The Mother’s tears and Son’s blood mixed as they dropped onto her shawl. Since then, people began coloring eggs red on Easter day and women began wearing shawls when visiting church. To achieve the dark red color, the peels of the purple onion are boiled with the eggs. This represents fertility and new life, the result of a sacrifice.

The Armenian Easter symbols are ***the red eggs, redwine, plav with raisins, fish and pascha.***Before the Easter egga are eaten it is the tradition to have an egg fight. One person holds his egg while the other tries to break it by hitting it with his egg. Easter eggs are decorated eggs. The ***red eggs symbolize the blood of Christ.Wine*** is the drink that Jesus and his pupils had drunk during the mysterious supper. Jesus imbrued a piece of bread in the wine and divided it to his pupils.***Pascha*** is a cake which symbolizes Jesus' crown of thorns.They put it on Jesus' head during Crucifixion. People put some sesame on the cake to look like the thorns.

According to the tradition the rice in the " ***Chamchov plav"*** are people and the raisins are Jesus' pupils.

Երրորդ խմբին ներկայացվող ուսուցողական նյութ

Easter Day in Great Britain

Easter is the most important festival in the Christian church year. It begins with Good Friday. The Romans killed Jesus Christ in Jerusalem about two thousand years ago. Christians believe in the Resurrection of Jesus Christ on the third day after his Crucifixion.

Why is Easter on a different day each year? This is because Easter Sunday is the Sunday after the first full moon after the first day of spring (21 March).

Easter eggs, Easter Rabbit (Easter Bunny) and sending Easter cards are tradition not only in Britain. This tradition goes back to the 19th century.

In Great Britain people buy new clothes to wear on Easter Sunday. There is a popular belief that wearing three new things at Easter brings good luck in the year.After church services many people like to take walks down the streets in their new Easter hats and suits. This is called the Easter parade.

SYMBOLS OF EASTER

Many of the symbols and traditions of Easter are connected with renewal, birth, good luck and fertility.

THE CROSS

Of course as it is a Christian festival one of the main symbols is a cross, often on a hill. When Jesus was crucified, the cross became a symbol of suffering. Then with the resurrection, Christians saw it as a symbol of victory over death. In A.D. 325, Constantine issued a decree at the Council of Nicaea, that the Cross would be the official symbol of Christianity.

PALMS

The week of Easter begins on Palm Sunday. Why *Palm* Sunday? Well, in Roman times it was customary to welcome royalty by waving palm branches, a bit like a ticker-tape parade. So, when Jesus arrived in Jerusalem on what is now known as Palm Sunday, people welcomed him with palm branches carpeting the streets and waving them. Today, on Palm Sunday, Christians carry palm branches in parades, and make them into crosses and garlands to decorate the Church.

EASTER EGGS

Easter eggs are a very old tradition going to a time before Christianity. Eggs after all are a symbol of spring and new life.

Exchanging and eating Easter eggs is a popular custom in many countries. In Great Britain before they were replaced by chocolate Easter eggs real eggs were used, in most cases, chicken eggs. The eggs were hard-boiled and dyed in various colors and patterns. The traditionally bright colours represented spring and light. Sadly, nowadays if you gave a child in Britain a hard-boiled egg on Easter Sunday, you would probably end up wearing it!

An older more traditional game is one in which real eggs are rolled against one another or down a hill. The owner of the egg that stayed uncracked the longest won. Even today in the north of England, for example as at Preston in Lancashire, they still carry out the custom of egg rolling. Hard boiled eggs are rolled down slopes to see whose egg goes furthest. In other places another game is played. You hold an egg in the palm of the hand and bang against your opponent's egg. The loser is the one whose egg breaks first.

THE EASTER BUNNY

Rabbits, due to their fecund nature, have always been a symbol of fertility.The Easter bunny (rabbit) however may actually be an Easter hare. The hare was allegedly a companion of the ancient Moon goddess and of Eostre.

In Great Britain children believe that if they are good the "Easter Bunny " will leave (chocolate) eggs for them.

Իսկ դասի ավարտին որպես ***անդրադարձ*** կատարվում է համեմատություն ՛՛Վեննի դիագրամ՛՛ - ի օգնությամբ: Համեմատում ենք <<Զատկի>> սիմվոլները 3 երկրների միջև: Յուրաքանչյուր խմբից աշակերտները գալիս և ցուցապաստառի վրա գրում են հաջորդ խմբի ներկայացրած <<Զատկի>> տոնի սիմվոլները :

“France” խումբը ներկայացնում է Հայաստանում Զատկի տոնի խորհրդանշանները:

“Armenia” խումբը ներկայացնում է Մեծ Բրիտանիայի Զատկի տոնի խորհրդանշանները:

“Great Britain ” խումբը ներկայացնում է Ֆրանսիայի Զատկի տոնի խորհրդանշանները:

Գտնում ենք ընդհանրություններ ու տարբերություններ:







Գնահատում

Աշակերտներին նախապես տեղեկացվում է, թե ինչպիսի գնահատման ձև է կիրառ-վելու,որպեսզի նրանք հնարավորություն ունենան նախապատրաստվելու: Գնահատվում է խմբի համագործակցային կարողությունները: Գնահատման թերթիկի վրա համապատասխան հարցերի դիմաց դրվում է մրցակցային նիշ: Դասի ավարտին ամփոփվում են արդյունքները:

Եզրահանգում

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Ջեյմս Վաթսոն

Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում , ակնհայտ է , որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով , ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

Կարծում եմ, համագործակցային ուսուցումը լավագույն միջոցն է <<Holidays and customs>> թեմայի ուսուցման գործընթացում: Աշակերտները ևս կարիք ունեն միմյանց հետ շփվելու, համագործակցելու, կիսելու գաղափարներն ու կարծիքները, արտահայտելու սեփական դիրքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ:

Օգտագործված նյութերի աղբյուրները

1<<Անգլերեն>> առարկայի չափորոշիչներ և ծրագրեր/Երևան <<Աստղիկ գրատուն>>2006

2.Համագործակցային ուսուցում:Ձեռնարկ/ Ա.Հովհաննիսյան, Կ.Հարությունյան,Ս.Խրիմյան,Ս.Խաչատրյանն ուրիշ.Երևան<<Անտարես>>2006

2. Федосеева В. Н., Кирюшкин Д. М., “Педагогика”, 1972

3.Թեմատիկ միավորների ժողովածու: Ձեռնարկ միջին դպրոցի ուսուցիչների և ուսուցիչ վերապատրաստողների համար.- Եր.: Տիգրան Մեծ, 2005

4.Անգլերեն 5: Հանրակրթ. դպր. 8-րդ դաս./Գասպարյան/

5. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ:/Կրթության Ազգային Ինստիտուտ/ 2008թ.